# ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

## 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

## 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Հայոց լեզու

Արճայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

**1.** Սիրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա այս պատմությունը:

Իշխանի ու հարուստի որդիները մտերմացան և դուրս եկան իրենց ոստանից՝ աշխարհ շրջելու: Գնացին հասան մի բերդի դռան: Տեսան, որ դարպասից շատ մարդու գլուխ էր կախված: Ապշահար ու զարհուրանքով մտան ամրոց: Ընդառաջ եկած ծառան նրանց տարավ պալատ՝ թագավորի մոտ:

Արքան երկու հյուրերին շատ սիրալիր ընդունեց, խրախճանքի սեղան բացեց, հյուրասիրեց նրանց համադամ խորտիկներով, ընտիր գինով, աղանդերով: Երբ հարուստի որդին մի պահ դուրս ելավ խնջույքի սրահից, թագավորը իշխանի որդուն ասաց.

— Դու թագավորի ես նման, իսկ այդ ընկերդ անարգ և ստոր մարդ է երևում, դու այդպիսի ընկերոջ հետ ինչո՞ւ ես մտերմություն անում:

— Թագավո՛ր,— պատասխանեց իշխանազունը,— ի՛նչ պակասություն ասես, ես ունեմ, բայց ընկերս իմ ամենից սիրելի մարդն է. մինչև կյանքիս վերջը ծառայելու եմ նրան:

Երբ հարուստի տղան ներս մտավ, դուրս ելավ իշխանի որդին: Եվ թագավորը նույն բանը մեծատունի որդուն ասաց:

— Ո՛վ արքա, — պատասխանեց հարուստի տղան,— ես նրա անարժան սպասավորն եմ:

Տեսնելով նրանց ընկերասիրությունը և անձնվիրությունը՝ թագավորը շատ ընծաներ տվեց և խաղաղությամբ ճանապարհ դրեց ընկերներին:

— Թագավո՛ր,— հարցրին նրան նախարարները,— քեզ մոտ եկած բոլոր հյուրերին մեծարեցիր և երեք օր հետո կտրել տվիր գլուխները: Պատճառն ի՞նչ է, որ այս երկու հյուրերին նվերներով ճանապարհ դրիր:

2. Քո կարծիքով ի՞նչ պատասխանեց արքան: Նրա պատասխանը գրի՛ր երկու նախադասությամբ (2 միավոր):

Թագավորն ասաց, որ մնացած հյուրերը ընկերոջ դուրս գալուց հետո նրան բամբասում և չարախոսում էին: Միայն այս երկուսն էին, որ իրար սիրում էին և նվիրված էին մեկմեկու...

3. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր իրար հոմանիշ բառերի զույգեր (3 միավոր):

Թագավոր – արքա

Ամբոց – բերդ

Խրախճանք – խնջույք

Հարուստ – մեծատուն

Անարգ – ստոր

Ընծա – նվեր

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր այս բառակապակցությունների իմաստն արտահայտող բառերը (3 միավոր):

Ճաշից հետո մատուցվող քաղցր ուտելիք -----աղանդեր-----------------

Համեղ, ընտիր կերակուր--համադամ---------------------------------

Իշխանի զավակ----իշխանազուն----------------------------------

Սարսափի և ահի զգացում----զարհուրանք-----------------------------

Թագավորանիստ քաղաք կամ մայրաքաղաք- ոստան---------------------

Հավատարմությամբ մի բանի կամ մեկին նվիրված լինելը---անձնվիրություն------

5. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր նույն արմատն ունեցող բառերը, ընդգծի՛ր այդ արմատը (2 միավոր):

Սիրալիր, հյուրասիրել, սիրելի, ընկերասիրություն:

6. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր <u>ուրախ, ուշ, ամուր, շուրջ</u> արմատներն ունեցող բառերը. դրանք վերլուծի՛ր բառակազմորեն, այդ արմատներով մեկական բառ էլ դո՛ւ գրիր (4 միավոր):

Խրախճանք – խրախ- ուրախ + ճ+ անք- խրախճանական

Ապշահար – ապ + շ/ուշ+ ա + հար – ուշադիր

Ամրոց-ամր-ամուր+ոց – ամրանալ, ամրություն

Շրջել-շրջ-շուրջ +ել – շրջակա

7. Անդավաճան ընկերության մասին առա՛կ հորինիր: Վերնագրի՛ր առակը (6 միավոր):

Գնահատման սանդղակ

| Միավոր | Նկարագրություն |
| --- | --- |
| 6 | 1. Առակի բովանդակությանը համապատասխան վերնագիր է ընտրել:<br>2. Առակի բովանդակությունը համապատասխանում է վերնագրին:<br>3. Պահպանել է առակի ժանրին բնորոշ կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ, խրատական մաս:<br>4. Առկա է առակին բնորոշ այլաբանությունը:<br>5. Բառապաշարը հարուստ է, բառերը կիրառել է տեղին և բովանդակությանը համապատասխան:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ և վրիպակներ չկան: |
| 4-5 | 1. Ընտրել է վերնագիր:<br>2. Առակի բովանդակությունը համապատասխանում է վերնագրին:<br>3. Մասամբ պահպանել է առակի ժանրին բնորոշ կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>4. Մասամբ առկա է առակին բնորոշ այլաբանությունը:<br>5. Բառապաշարը հարուստ չէ, 1-2 տեղում բառերի սխալ կիրառություն կա:<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 3-4 սխալներ և վրիպակներ կան: |
| 2-3 | 1. Առակը չի վերնագրել:<br>2. Մասամբ պահպանել է առակի ժանրին բնորոշ կառուցվածքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:<br>3. Առակին բնորոշ այլաբանություն առկա չէ:<br>4. Բառապաշարն աղքատիկ է, 1-2 տեղում բառերի սխալ կիրառություն կա:<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ և վրիպակներ կան: |
| 1 | Շարադրանք գրել է, բայց առակ չէ: |
| 0 | Առաջադրանքը չի կատարել: |